

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



ՅՈՒՆԻԲԱՆԿ

20:23



ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅԻ ՈՒՂԵՐՁԸ

Հարգելի բաժնետերեր, հաճախորդներ և գործընկերներ,

2023 թվականին Յունիբանկը շարունակեց ակտիվ զարգացումը և ամրապնդեց իր դիրքը շուկայում՝ գործունեության բոլոր ուղղություններում գրանցելով նշանակալի արդյունքներ: Չնայած աշխարհաքաղաքական և տարածաշրջանային մարտահրավերներին, տարին ՀՀ բանկային համակարգի համար կայուն էր: Հաշվետու ժամանակաշրջանում Յունիբանկն ապահովեց ֆինանսական նպատակային ցուցանիշները՝ պահպանելով շահութաբերության, ակտիվների որակի ու կապիտալի համարժեքության բարձր մակարդակ:

Տարվա արդյունքները հաստատեցին ազնիվ և հուսալի ֆինանսական գործընկեր լինելու, հաճախորդներին լսել կարողանալու, մարդկանց և բիզնեսի համար օգտակար և շահավետ լուծումներ գտնելու՝ մեր ընտրած ռազմավարության արդյունավետությունը: Հաշվետու տարում բանկի կապիտալը գերազանցեց 40 մլրդ դրամը, ակտիվների ծավալը՝ 289 մլրդ դրամը: Բանկի վարկային ներդրումները 2023 թվականին աճեցին գրեթե 25%-ով:

Յունիբանկը 2023 թվականն ավարտեց 4,5 մլրդ դրամ շահույթով, և բանկի խորհուրդը որոշեց Բաժնետերերի ժողովի հաստատմանը ներկայացնել սովորական անվանական բաժնետոմսերի գծով շահութաբաժինների վճարման հարցը: Շահութաբաժինների ընդհանուր գումարը կկազմի 4,1 մլրդ դրամ: Շահութաբաժիններ վճարելու որոշումն արտացոլում է բանկի՝ հաշվետու ժամանակահատվածի արդյունավետ գործունեությունը:

Գործունեության բոլոր ուղղություններում շարունակական աճի շնորհիվ բանկի բաժնետոմսերի գներն աճել են և ֆոնդային բորսայում վաճառվում են անվանական արժեքից եռակի անգամ ավելի գնով: Մենք կշարունակենք բարձրացնել բանկի ներդրումային գրավչությունը և պահպանել հաճախորդների սպասարկման բարձր մակարդակը՝ համադրելով օֆլայն և թվային ծառայությունները:

Հաշվետու տարում մենք ընդլայնեցինք մեր ներկայությունը. այսօր Յունիբանկի սպասարկման ցանցը ներառում է 50 մասնաճյուղ և 100-ից ավելի պրոմո կետ: Միաժամանակ մենք գնում ենք դեպի թվայնացում և առաջադեմ տեխնոլոգիաների ներդրում: Մեր հաճախորդները գնալով ավելի հաճախ են օգտվում բանկի մոբայլ հավելվածից, որը թույլ է տալիս հեշտությամբ լուծել առօրյա ֆինանսական խնդիրները: Տարվա կտրվածքով UNIMobile հավելվածից օգտվողների թիվն աճել է գրեթե 14%-ով:

Միջազգային վճարային Visa համակարգը տարվա արդյունքներով Յունիբանկին շնորհեց Pinnacle Partnership մրցանակ: Բանկը կշարունակի զարգացնել իր հետագա համագործակցությունը Visa և Mastercard համակարգերի հետ՝ հաճախորդների համար առավելագույնս պարզեցնելով քարտերին գումարի փոխանցումն ու գնումների համար վճարումները:

Հաշվի առնելով հաճախորդների կողմից ներդրումային պահանջարկը՝ Յունիբանկը 2023 թվականի վերջին գործարկեց նոր ուղղություն՝ բրոքերային ծառայությունների մատուցում: Unibank Invest մոբայլ հավելվածը հնարավորություն է տալիս հաճախորդներին ներդրումներ կատարել կապիտալի գլոբալ շուկաներում: Unibank Invest-ի հետ հաճախորդները կարող են մուտք գործել աշխարհի առաջատար բորսաներ՝ NYSE, NASDAQ, LSE, HKEX, Xetra և այլն:

Պրեմիում բանկային ծառայությունների և կապիտալի կառավարման ոլորտում Յունիբանկի բարձր մակարդակը հաստատում է աշխարհի ամենահեղինակավոր և ազդեցիկ հրապարակումներից մեկի՝ Euromoney-ի մրցանակը: Յունիբանկի private banking-ը՝ Unibank Privé-ն, ճանաչվել է լավագույնը Հայաստանում Euromoney Global Private Banking Awards 2023-ում:

Moody's Investors Service միջազգային վարկանիշային գործակալությունը հաստատել է Յունիբանկի վարկանիշը B2 մակարդակում՝ «կայուն» կանխատեսումով, որը նույնպես վկայում է բանկի ֆինանսական կայունության և հուսալիության մասին:

Վստահ ենք, որ 2024 թվականին ևս կարձանագրենք նոր ձեռքբերումներ: Մեր նպատակներն են՝

- ▶ Մանրածախ և ՓՄՁ-ների ոլորտում շուկայական մասնաբաժնի ավելացում,
- ▶ Բրոքերային ծառայությունների հետագա զարգացում,
- ▶ Գործիքների պորտֆելի ընդլայնում, ներառյալ՝ քարտային, և խաչաձև վաճառքների ավելացում,
- ▶ Ավտոմատացման և թվային ծառայությունների զարգացում,
- ▶ Հավատարմություն ESG սկզբունքներին,
- ▶ Կորպորատիվ կառավարման կատարելագործում:

Տարվա ընթացքում մենք մեծ ուշադրությանն ենք արժանացրել բիզնեսի սոցիալական առաքելությանը: Յունիբանկը երկրի հասարակական կյանքում ունեցել է ամենագործուն մասնակցությունը: Բանկը զգալի ներդրում է ունեցել բարեգործական, հովանավորչական և սոցիալական ծրագրերում: Այդ գործունեությունը շարունակվելու է: Երկարաժամկետ պլաններում են հետագա աջակցությունը կրթությանը, սպորտին, բնապահպանությանը և ֆինանսական գրագիտության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերին:

Խորհրդի անունից իմ երախտագիտությունն եմ հայտնում ներդրողներին և գործընկերներին արդյունավետ համագործակցության, աջակցության և վստահության համար:

Անկեղծ շնորհակալություն մեր բոլոր հաճախորդներին, ովքեր իրենց համար բացահայտել են Յունիբանկի առավելությունները, մեր ծառայությունների որակն ու հարմարավետությունը: Ձեր շնորհիվ մենք զարգանում ենք և հպարտանում, որ դուք խորհուրդ եք տալիս ընտրել Յունիբանկը՝ որպես կայուն և վստահելի գործընկեր:

Առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում Յունիբանկի անձնակազմին՝ արդյունավետ աշխատանքի և ընդհանուր նպատակներին հասնելու թիմային փոխգործակցության համար: Մենք կշարունակենք ակտիվորեն աճել և գործադրել բոլոր ջանքերը հաճախորդների, ներդրողների և Հայաստանի տնտեսության կարիքները բավարարելու համար:

«Յունիբանկ» ԲԲԸ համահիմնադիր, Խորհրդի նախագահ

ԳԱԳԻԿ ԶԱԶԱՐՅԱՆ



«ԱՄԵՆԱԱՐԺԵՔԱՎՈՐ ՌԵՍՈՒՐՍԸ
ԺԱՄԱՆԱԿՆ Է»

ՄՏԻՎ ԶՈՐԲՍ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅԻ ՈւՂԵՐՁԸ 01

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 06

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 06

2023 ԹՎԱԿԱՆԻ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 08

ՄԱՆՐԱԾԱԽ ԲԻԶՆԵՍ 12

2023 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 13

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԻԶՆԵՍ 14

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԱՅԻՆ ՑԱՆՑ 14

ԲԱԺՆԵՏԵՐԵՐ և ՆԵՐԴՐՈՂՆԵՐ 16

HR ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 17

ՄԵՐ ԹԻՄԸ 18

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 20

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 20

ՆԵՐՔԻՆ ԱՌԴԻՏ 20

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ 21

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՅՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ 21

ԻՐԱՎԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ և ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԲԵՐՈՒՄ 21

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇ 22

2024 ԹՎԱԿԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 22


ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 22

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 26

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

2023 թ.-ի արդյունքներով ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշը բարձրացել է տարեկան 9,2%-ով: Հիմնականում դեր են խաղացել ծառայությունների ոլորտի՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, օդային տրանսպորտի և հանրային սննդի արտադրական ծավալների մեծացումը: Համաշխարհային բանկի հունիսյան «գլոբալ տնտեսական հեռանկարներ» զեկույցում Հայաստանի տնտեսական աճը 2024 թվականին գնահատվում է 4,8%, 2025 թվականին՝ 5%: Ըստ S & P-ի վերլուծաբանների՝ 2024 թվականին ԱՊՀ երկրներից Հայաստանը, Վրաստանը և Ուզբեկստանը բանկային հատվածի զարգացման գործում կգրանցեն ամենամեծ հաջողությունները:

Բանկային համակարգի ցուցանիշների դինամիկան և դրանց հարաբերակցությունը ՀՆԱ-ին



IMF կանխատեսում 2024թվ - 6%

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկային համակարգը ներառում է 18 առևտրային բանկ: Հայաստանի բանկային համակարգի ակտիվները 2022 թվականի համեմատ աճել են 797.9 մլրդ դրամով կամ 9.5%-ով և 31.12.2023թ. դրությամբ կազմել 9,191 մլրդ դրամ, վարկային պորտֆելն աճել է 867 մլրդ դրամով և կազմել 5,043.9 մլրդ դրամ, պարտավորությունների ցուցանիշներն աճել են 624.0 մլրդ դրամով և 31.12.2023 թ. դրությամբ կազմել են 7,707.0 մլրդ դրամ, աճը կազմել է 8.8%:

2023 թվականին պարտավորությունների ցուցանիշներում մեծ տեսակարար կշիռ ունեն հաճախորդներից ներգրավված միջոցները, որոնք աճել են 434.8 մլրդ դրամով և կազմել 5,496.4 մլրդ դրամ: 2023 թ. գործունեության արդյունքներով ՀՀ բանկային համակարգում ձևավորվել է 229.9 մլրդ դրամ շահույթ: ՀՀ բանկային համակարգի շահույթի ցուցանիշը 2022թ.-ի համեմատ տարեկան կտրվածքով նվազել է 32.5 մլրդ դրամով կամ 12.4% -ով:



«Ժամանակը փողից արժեքավոր է. կարող ես ավելի շատ փող աշխատել, բայց չունենալ ավելի շատ ժամանակ»

ԶԻՄ ՌՈՆ

289 ԱԿՏԻՎՆԵՐ
մլրդ. ՀՀ դրամ

149 ՎԱՐԿԵՐ
մլրդ. ՀՀ դրամ

248 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
մլրդ. ՀՀ դրամ

211 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
մլրդ. ՀՀ դրամ

16 ՀՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ
մլրդ. ՀՀ դրամ


41 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱԴԻՏԱԼ
մլրդ. ՀՀ դրամ

4.5 2023Թ. ԾԱՅՈՒՅԹԸ
մլրդ. ՀՀ դրամ

12% ROE
տ.կ

2% ROA
տ.կ

Ֆունդի մասին ԲԲԸ-ի ակտիվները (մլն ՀՀ դրամ)



Ֆունդի մասին ԲԲԸ-ի պարտավորությունները (մլն ՀՀ դրամ)



Ֆունդի մասին ԲԲԸ ընդհանուր կապիտալը (մլն ՀՀ դրամ)



ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

Բանկի ընդհանուր վարկային ներդրումներն առ 31.12.2023թ. կազմել են 149.4 մլրդ. ՀՀ դրամ, նախորդ տարվա համեմատ աճել են 24.6%-ով կամ 29.5 մլրդ. ՀՀ դրամ:

Վարկերի արժույթային
կառուցվածքն առ 31.12.23թ

ԱՓԱ
(Ազատ փոխարկելի
արժույթ)

28%

ՀՀ դրամ
72%

Վարկային պորտֆելի կառուցվածքն
առ 31.12.23թ. դրությամբ

Բիզնես վարկեր

29%

Մանրածախ
վարկեր
71%

ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

Բանկի ներգրավված միջոցների ծավալը 2023 թվականին կազմել է 244.2 մլրդ. ՀՀ դրամ, ընդհանուր պարտավորությունների մեջ ֆիզիկական անձանց ընդհանուր ավանդները կազմել են 69.8% կամ 173.7 մլրդ. ՀՀ դրամ, ընդ որում ցպահանջ միջոցների պորտֆելը մնացել է գրեթե անփոփոխ՝ կազմելով 85.9 մլրդ. դրամ, իսկ ժամկետային ավանդների ծավալը կազմել է 87.7 մլրդ. դրամ:

Ժամկետային ավանդների
կառուցվածքը

Իրավաբանական անձինք

5,1%

Անհատներ
94,9%

Ներգրավված միջոցների
կառուցվածքը 31.12.23թ

Բանկի կողմից
թողարկված արժեթղթեր

4%

Ֆինանսական
կազմակերպությունների միջոցներ

8%

Ներգրավված
այլ միջոցներ

0%

Ներգրավված
վարկեր

2%

86%

Հաճախորդների նկատմամբ
պարտավորություններ




«Փողը, ինչպես և ժամանակը, պետք է կառավարել»

ԼՈՒ ՅՈՒՆԵՍԿՈ

ԱՐԺԵԹՂԹԵՐ

2023 թվականին Բանկի արժեթղթերի պորտֆելը կազմել է 36.5 մլրդ ՀՀ դրամ: Արժեթղթերի պորտֆելը մեծամասամբ կազմված են պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներից, որոնք հիմնականում կիրառվում են իրացվելիության կառավարման նպատակով: 2023 թվականի տարեվերջի դրությամբ ընդհանուր արժեթղթերի պորտֆելում էական մասնաբաժին են կազմել ՀՀ կառավարության արժեթղթերը՝ 87.5% (աճը նախորդ տարվա նկատմամբ՝ 12.8%), կորպորատիվ պարտատոմսերի մասնաբաժինը կազմել է 7.6%:

Արժեթղթերի պորտֆել
31.12.23թ. դրությամբ



ՄԱՆՐԱԾԱՆ ԲԻԶՆԵՍ

Մանրածախ բիզնեսի զարգացումը Բանկի համար շարունակել է առաջնահերթություն մնալ նաև 2023 թվականին:

Սպառողական պահանջարկի վերականգնումը հանգեցրեց վարկավորման աճին, ինչի արդյունքում ընդհանուր մանրածախ պորտֆելը աճել է ավելի քան 25 մլրդ դրամով կամ 30%-ով՝ հասնելով 108.2 մլրդ դրամի: Հաշվետու տարվա ընթացքում նկատվել է վարկառուների կարգապահության բարելավում, ժամկետանցների տեսակարար կշիռը նվազել է մինչև 2,1%:

Երկրում բնակարանաշինության զարգացման հետ մեկտեղ հիփոթեքը դարձավ մանրածախ վարկավորման զարգացման Նիշային գործիք, այդ վարկերի պորտֆելը հասավ 32.2 մլրդ դրամի, աճելով տարվա ընթացքում ավելի քան 20 մլրդ դրամով, կամ 170%-ով: Ընդ որում ժամկետանցության առումով այս պորտֆելը գրանցել է ամենացածր ցուցանիշը՝ 0,1%: Պետության աջակցությամբ Արցախի առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման ծրագրի շրջանակներում Յունիբանկն իր ակտիվ մասնակցությամբ 2023թ.-ին բավարարել է ավելի քան 500 նպաստառու ընտանիքների հայտեր:

Գործընկերների ցանցի ընդլայնումը և Նորարարական ավտոմատացված համակարգը Յունիբանկին թույլ տվեցին պահպանել առաջատար դիրքերը POS վարկերի քանակով և ծավալով: Արհեստական բանականության տեխնոլոգիայի օգնությամբ 2023 թվականին մշակվել է ավելի քան 310,000 վարկային հայտ:

2023 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԱՈՐԱԳՈՒՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Յունիբանկն իրականացրեց բաժնետոմսերի Նոր թողարկում և հրապարակային առաջարկի արդյունքում տեղաբաշխեց ոչ փաստաթղթային սովորական բաժնետոմսեր, որոնց ընդհանուր արժեքը տեղաբաշխման գնով կազմեց 2.5 մլրդ ՀՀ դրամ՝ դրանով իսկ մեծացնելով միևնույն տարբերակի մասնաբաժինը:
- Յունիբանկի private banking-ը՝ Յունիբանկ Պրիվեթ, ճանաչվել է լավագույնը Հայաստանում՝ ըստ Euromoney Global Private Banking Awards 2023-ի: Հանդիսավոր արարողության ժամանակ, որը տեղի ունեցավ մարտի 29-ին Լոնդոնում, Յունիբանկը դարձավ Best Domestic Private Bank in Armenia անվանակարգի մրցանակակիր:
- Բազմամյա և արդյունավետ համագործակցության համար Visa-ն Յունիբանկին շնորհել է Pinnacle Partnership մրցանակը:
- Յունիբանկը դարձավ Ֆրանսիա-Հայաստան առևտրաարդյունաբերական պալատի (Ֆրանսիա-Հայաստան ԱԱՊ) անդամ, ինչը հնարավորություն կտա բանկին իր մասնակցությունն ունենալ Ֆրանսիա-Հայաստան ԱԱՊ-ի անդամների միջև գործարար կապերի ամրապնդմանն ու զարգացմանը: Համագործակցության շրջանակում Յունիբանկը մտադիր է իրականացնել Նոր Նախագծեր՝ ընդլայնելով հարաբերությունները ֆրանսահայ գործարար համայնքի և Հայաստանում ֆրանսիական ընկերությունների հետ:
- Մասնաճյուղային ցանցի օպտիմալացման քաղաքականության շրջանակներում բարեկարգվել են «Բայրոն» և «Աշտարակ» մասնաճյուղային տարածքները, բացվել է «Մխչյան» մասնաճյուղը: Բանկը 2023 թվականին գրանցել է ակտիվ հաճախորդների աճ՝ 51,770-ով ավել հաճախորդ՝ տարեվերջին ունենալով ավելի քան 340,000 հաճախորդ: Զուգահեռաբար աշխատանքներ են տարվել բջջային հավելվածի թարմացման ուղղությամբ, UNIMobile-ի օգտատերերի թիվը 2022 թվականի համեմատ աճել է 13.5%-ով:
- Համաշխարհային անկայունության պայմաններում Բանկը մշտապես աշխատել է թղթակցային հարաբերությունների աշխարհագրությունն ընդլայնելու ուղղությամբ՝ հաստատելով վստահելի գործընկերակցություն Միջին Ասիայի, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բանկերի հետ՝ ապահովելու հաճախորդների արտաքին տնտեսական և անդրսահմանային վճարումների օպերատիվ իրականացումը (OTP Hungary, Mashreq Bank UAE, Misr-Bank Europe GMBH, Germany, CenterCredit Bank Kazakhstan, Eskhata Bank, Tajikstan և այլն):
- Յունիբանկը գործարկեց Նոր ծառայություն՝ Visa Direct, որը հաճախորդներին հնարավորություն է տալիս Visa կամ Mastercard քարտերից գումար փոխանցել արտասահմանյան բանկերի կողմից թողարկված Visa քարտերին, գործարկեց Google Pay ծառայությունը՝ իր քարտապաններին հնարավորություն ընձեռելով պարզ և անվտանգ անհայտ վճարումներ կատարել Android և WearOS համակարգերով աշխատող սարքերով, ստացավ թույլտվություն «ՅՈՒԲԻՓԵՅ» (UBPAY) դրամական փոխանցումների հայաստանյան միասնական վճարահաշվարկային համակարգի ստեղծման և գործունեության համար:
- Բանկի շահույթը 2023 թվականի արդյունքներով կազմել է 4.5 մլրդ ՀՀ դրամ և Բանկը նախատեսում է 2023 թվականի արդյունքներով վճարել շահութաբաժին իր բաժնետերերին՝ 4.1 մլրդ ՀՀ դրամի չափով:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԻԶՆԵՍ

Յունիբանկի գործունեության հիմնական ուղղություններից մեկը փոքր և միջին բիզնեսին աջակցելն է: Կորպորատիվ բիզնեսի հիմնական խնդիրն էր կենտրոնական բիզնեսի առավել ցածր ռիսկային հատվածների վարկավորման վրա՝ մեծացնելով վարկային պորտֆելի ծավալը և շուկայում Բանկի մասնաբաժինը, շեշտը դնելով բարեխիղճ վարկառուների հետ հարաբերությունների զարգացման և նրանց համապարփակ սպասարկման վրա:

Նիշային ուղղություններն էին փոքր արդյունաբերությունը, առևտուրը, գյուղատնտեսությունը, շինարարությունը և ծառայությունների մատուցման ոլորտը: Բանկը ակտիվորեն սկսել է ներգրավել և վարկավորել շինարարության ոլորտը՝ պայմանավորված բնակելի շենքերի և կոմերցիոն տարածքների շինարարության տեմպերի նկատելի աճով: Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հետ ևս կնքվել է համաձայնագիր ֆինանսական լիզինգ տրամադրելու գործընթացում համագործակցության շրջանակները ընդլայնելու նպատակով:

2023 թվականի վերջի դրությամբ կորպորատիվ վարկերի ծավալը Բանկի ընդհանուր վարկային պորտֆելում կազմել է 41,8 մլրդ դրամ:

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԱՅԻՆ ՑԱՆՑ

Տարեվերջի դրությամբ Յունիբանկի սպասարկման ցանցը ներառում էր 50 մասնաճյուղ Հայաստանում, 123 պրոմի կետ, 97 բանկոմատ, 95 վճարային տերմինալ և 275 POS տերմինալ, Ղազախստանում գործում է բանկի ներկայացուցչությունը:

Բանկը դեռևս 2022 թվականից սկսեց վերափոխել իր մասնաճյուղերը՝ նպատակ ունենալով նորարարական միջավայրում հետաքրքիր տեխնոլոգիական լուծումների միջոցով հաճախորդներին բարձրակարգ ծառայություններ մատուցել և դրանով իսկ հաճախորդների համար առավել հաճելի դարձնել Բանկ այցելությունը:

Տարվա ընթացքում Բանկը սպասարկել է ավելի քան 340.000 հաճախորդների (2023թ-ին ներգրավել է գրեթե 52,000 նոր հաճախորդ):

Private Banking

Բանկը ծագում է դառնալ գործընկեր իր հաճախորդների համար, և ոչ թե լինել պարզապես ֆինանսական հաստատություն: Իր VIP հաճախորդներին Յունիբանկը երաշխավորում է անհատական և ճկուն մոտեցում, ժամանակի խնայողություն, ցանկացած իրավիճակում աջակցություն ցուցաբերելու պատրաստակամություն, մասնավոր կապիտալի կառավարման համաշխարային փորձի կիրառում: Այսպիսով Բանկը նպատակ ունի հաճախորդների համար ստեղծել հարմարավետ պայմաններ և դրանով իսկ անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուրին:




«Հաջողության բանալին զարթուցիչի տակ է»

ԲԵՆՋԱՄԻՆ ՖՐԱՆԿԼԻՆ

ԲԱԺՆԵՏԵՐԵՐ և ՆԵՐԴՐՈՂՆԵՐ

Բանկը կարևորում է իր բաժնետերերի, ինչպես նաև ներդրողների շահերը և իրավունքները՝ նրանց համար ստեղծելով բարենպաստ պայմաններ, ապահովելով տեղեկատվության թափանցիկություն և ներդրումային գրավչություն:

Յունիբանկի բաժնետոմսի գնի դինամիկան 2015-2024թթ.



Բաժնետերերի համար առավելությունները.

- AMX-ում ցուցակված բաժնետոմսերն ազատված են հարկումից
- Բաժնետոմսերի վաճառք ցանկացած պահին բրոքերի միջոցով
- Բանկի սակագնային փաթեթի շրջանակներում տրամադրվող ծառայություններից զեղչով օգտվելու հնարավորություն
- Ծախսերաբաժինների վճարումների թիրախային մակարդակը կազմում է Բանկի նախորդ տարվա զուտ շահույթի առնվազն 25 տոկոսը

2023 թվականին Բանկի բաժնետերերի կառուցվածքում ներգրավվել են նոր բաժնետերեր, որի արդյունքում 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնեմասնակցության հարաբերակցությունը կազմել է հետևյալը՝ Յունիիոլդինգ ԶԻԶԻ Լիմիթեդ. Ընկերությունը՝ 83.6%, միևնույն տարբերակներ՝ 16.4% (217 միևնույն տարբերակներ):

Բանկը մեծ ուշադրություն է դարձնում ներդրումային ծառայությունների մատուցմանը և նոր պրոդուկտների ներդրմանը՝ նպատակ ունենալով ներգրավել հավատարիմ ներդրողներին և՛ իրավաբանական, և՛ ֆիզիկական անձանց:

Հաշվի առնելով հաճախորդների կողմից ներդրումային պահանջարկը՝ Յունիբանկը 2023 թվականի վերջին գործարկեց նոր ուղղություն՝ բրոքերային ծառայությունների մատուցում: UniBank Invest մոբայլ հավելվածը հնարավորություն է տալիս հաճախորդներին ներդրումներ կատարել կապիտալի գլոբալ շուկաներում: UniBank Invest-ի հետ հաճախորդները կարող են մուտք գործել աշխարհի առաջատար բորսաներ՝ NYSE, NASDAQ, LSE, HKEX, Xetra և այլն:

2023 թվականին Բանկը շարունակեց նախորդ տարիների պես պարտատոմսերի թողարկման գործընթացը՝ հասարակությանն առաջարկելով ավանդից ավելի բարձր եկամտաբերությամբ և ավելի ճկուն գործիք:

2016 թվականից սկսած Բանկը հանդիսանում է հայկական կորպորատիվ պարտատոմսերի շուկայի ակտիվ մասնակից, հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում թողարկվել է 3 պարտատոմսերի տրանշ 5 մլն ԱՄՆ դոլարի և 2 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով :

HR ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանկի աշխատակիցների փաստացի թվաքանակը 2023-ի վերջի դրությամբ կազմել է 913: Բոլոր նոր աշխատակիցների սահուն մուտքը Բանկ ապահովելու համար տարբեր քայլեր են ձեռնարկվում: Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում գտնվող Բանկի ուսումնական կենտրոնում բանկի փորձառու աշխատակիցների մասնակցությամբ կազմակերպվում են մի շարք դասընթացներ՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի, ռիսկերի կառավարման, SWIFT համակարգով միջազգային փոխանցումների և տեղեկատվական անվտանգության, բանկային պրոդուկտների և ծառայությունների մասին գիտելիքների կատարելագործման, բանակցությունների և հաճախորդների սպասարկման հմտությունների ոլորտներում՝ շեշտը դնելով որակյալ ծառայությունների մատուցման և խաչաձև վաճառքների հնարավորությունների վրա: Ընդհանուր առմամբ իրականացվել են թվով 44 ներքին և արտաքին սեմինարներ, որտեղ ներգրավված են եղել շուրջ 630 աշխատակիցներ:

«Յունիբանկ» ԲԲԸ-ն և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը կնքեցին համագործակցության հուշագիր, որի նպատակն է թվային բանկային գործի որակյալ կրթության համար անհրաժեշտ լաբորատորիայի ապահովումը, ուսանողների համար նպատակային վճարովի պրակտիկաների կազմակերպումը, ինչպես նաև բանկի մասնագետների հետ ուսումնական պլանների ձևավորումը և կարճաժամկետ դասընթացների միջոցով բանկի կադրային կազմի համալրումը: Բանկը ակտիվորեն համագործակցում է նաև մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների և կարիերայի կենտրոնների հետ, միաժամանակ կազմակերպում է ուսանողների ուսումնաարտադրական և գիտահետազոտական փորձառությունները՝ հետագայում Բանկի թիմում նրանց ներգրավվելու նպատակով: Մենք գնահատում ենք մեր ղեկավար կազմի մշտական և հետագա զարգացումը՝ դրանով խթանելով նրանց մասնակցությունը ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանից դուրս անցկացվող միջազգային դասընթացներին: Բանկում նաև ստեղծվել է Որակավորման հանձնաժողով, որի գործառնություններից մեկը հանդիսանում է Բանկի ղեկավարների թեկնածուների գիտելիքների և մասնագիտական որակավորման ստուգումը:



ԳԱԳԻԿ ԶԱՔԱՐՅԱՆ
Խորհրդի նախագահ
«Յունիբանկ» ԲԲԸ - համահիմնադիր,
Խորհրդի նախագահ
Ռեզո Ինջուրանս ԱՓԲԸ
Տնօրենների Խորհրդի նախագահ



ԳԵՈՐԳԻ ՊԻՍԿՈՎ
«Յունիբանկ» ԲԲԸ - համահիմնադիր,
Խորհրդի անդամ,
«Պրոտոբեյզ Լաբարատորիզ»
ՍՊԸ-ի հիմնադիր



ՎԱՐԴԱՆ ԱԹԱՅԱՆ
Խորհրդի անդամ



ՀՐԱՀԱՏ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Խորհրդի անդամ



ՌՈՒԲԵՆ ԻՆՋԻԿՅԱՆ
Խորհրդի անդամ



ՖԻԼԻՊ ԴԵԼՄՈՏ
Խորհրդի անդամ



ՎԱՐԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆ
Խորհրդի անդամ



ՄԵՍՐՈՊ ԶԱԿՈՔՅԱՆ
Վարչության նախագահ



ԱՐԱՐԱՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ
Վարչության նախագահի
առաջին տեղակալ



ԳՈՂԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ֆինանսական տնօրեն -
Գլխավոր հաշվապահ



ՕՎԱՍԱՆՆԱ ԱՌԱԶԵԼՅԱՆ
Վարչության նախագահի
առաջին տեղակալ - Իրավական
սպասարկման և ժամկետանց
պարտավորությունների հետքերման
գծով տնօրեն



ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Վարչության նախագահի
առաջին տեղակալ,
Կորպորատիվ բիզնեսի
զարգացման և վաճառքների
տնօրեն



ԳՈՒՐԳԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ
Վարչության նախագահի
առաջին տեղակալ,
Մանրածախ բիզնեսի զարգացման
և վաճառքների տնօրեն




ՎԱԴԻՆԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Վարչության նախագահի
տեղակալ նախագծերի և
ստանդարտների ներդրման
գծով



ԱՐԹՈՒՐ ԱՊԵՐՅԱՆ
Օպերացիոն սպասարկման
և տեղեկատվական համակարգերի
տնօրեն



ՍԵՐԳԵՅ ՔՈՉԱՐՅԱՆ
Ռիսկերի կառավարման
գծով տնօրեն



ԱՐԹՈՒՐ ՂՈՒԿԱՍՈՎ
Ներքին աուդիտի տնօրեն

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կորպորատիվ կառավարման համակարգի կատարելագործման ծրագրերի շրջանակներում իրականացվել են բարեփոխումների մի շարք փուլեր: Սկզբունքների մշակմանը աջակցելու համար՝ հաշվի առնելով լավագույն համաշխարհային փորձը, Բանկն օգտվել է KPMG աուդիտորական ընկերության ծառայություններից:

Բանկի ռազմավարական ծրագրերը պատշաճ իրականացնելու նպատակով ձեռնարկվում են անհրաժեշտ գործողություններ, որպեսզի Խորհրդի կազմը և կառուցվածքը համաչափ լինեն Բանկի չափին, կառուցվածքին, ռիսկի նկարագրին և բիզնես մոդելին: Այդ նպատակով ներգրավվել են Խորհրդի Նոր անդամներ, Խորհրդի Ներսում ներդրվել է անհատական լիազորությունների և իրավասությունների բաշխման մատրիցա՝ հաշվի առնելով պրոֆիլային գիտելիքները, փորձն ու որակավորումը, վերանայվել է Խորհրդին կից հանձնաժողովների կազմը:

Բանկի արդյունավետ աշխատանքի ապահովման գործում կառավարման մարմիններին շարունակում են աջակցել հետևյալ հանձնաժողովները՝ Խորհրդին կից՝ Աուդիտի և ռիսկերի կառավարման հանձնաժողով, Ներդրումային հանձնաժողով, Անձնակազմի և պարգևատրումների հանձնաժողով, Վարչությանը կից՝ Ակտիվների և պասիվների կառավարման և սակագնային հանձնաժողով, Անձնակազմի գնահատման հանձնաժողով, Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական անվտանգության հանձնաժողով, Գույքագրման, գնումների և օտարման հանձնաժողով:

Արդյունավետ գործում են նաև Պահուստների կառավարման հանձնաժողովը, Վարկային կոմիտեն, Տենդերային հանձնաժողովը, Վարկային սկորինգի հանձնաժողովը:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Բանկի ռիսկերի կառավարման նպատակն է.

- Բարելավել հաճախորդների սպասարկման որակը,
- Հասնել Բանկի ռազմավարական բիզնես նպատակներին անվտանգ և վերահսկելի եղանակով, համապատասխան ռիսկ / շահութաբերություն հարաբերակցությամբ
- Բարձրացնել անձնակազմի ռիսկի կառավարման հմտությունները՝ հստակ սահմանելով աշխատակիցների դերերը, պարտականությունները և լիազորությունները:

Բանկի գործունեության բոլոր մակարդակներում աշխատակիցների պարտականությունն է, գիտակցել հնարավոր ռիսկերը, որոնք կարող են առաջանալ իրենց գործողությունների և որոշումների արդյունքում:

ՆԵՐՔԻՆ ԱՌԴԻՏ

Ներքին աուդիտը անկախ, անաչառ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ է՝ կազմակերպության գործառնությունները բարելավելու համար: Այն օգնում է կազմակերպությանն իրագործել իր նպատակները՝ հետևողական մոտեցմամբ գնահատելու և բարելավելու ներքին ակոդղության, ռիսկերի կառավարման և կորպորատիվ կառավարման գործընթացների արդյունավետությունը: Ներքին աուդիտի տնօրենը և անդամները իրենց գործառույթների իրականացման ընթացքում առաջնորդվում են անկախության, օբյեկտիվության, գաղտնիության և կոմպետենտության սկզբունքներով:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

Բանկի Համապատասխանության տնօրինության հիմնական նպատակն է աջակցել Բանկին՝ ապահովելու գործունեության համապատասխանությունը սահմանված կանոններին, ներքին քաղաքականությանը և ընթացակարգերին, օրենսդրական պահանջներին:

Համապատասխանության տնօրինությանը վերապահված է նաև Բանկի գործունեության վերահսկումը՝ FATCA պահանջներին համապատասխանության տեսանկյունից:

Համապատասխանության տնօրինությունը նաև վերլուծում է հաճախորդների բողոքներն ու առաջարկները՝ սպասարկման որակը բարելավելու և նմանատիպ բողոքները կանխելու նպատակով: Համապատասխանության տնօրինության և մասնաճյուղերի միջև օպերատիվ փոխգործակցության շնորհիվ 2021-2023թթ. ընթացքում հաճախորդների թվաքանակի աճի պարագայում գրանցվել է հաճախորդների բողոքների քանակի շարունակական էական նվազում (2023թ. բողոքների թիվը 2022թ. համեմատ նվազել է 19%-ով, իսկ 2022թ.ին՝ 27%-ով 2021թ. համեմատ):

ՓԼ/ԱՖ-ի ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով Բանկում ստեղծվել է Օպերացիոն անդերրայթինգի վարչություն, որը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի վարչության հետ համատեղ իրականացնում են Նոր հաճախորդների ուսումնասիրություն, գործող հաճախորդների ռիսկի դասի վերանայում և հաճախորդների կողմից իրականացվող գործարքների պատշաճ ուսումնասիրություն:

Բանկն նաև ավարտել է LexisNexis համակարգի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի սկրինինգային ծրագրային փորձարկումը: Ծրագրի փուլային ինտեգրման արդյունքում հաճախորդների ստուգման գործընթաց է իրականացվում: 2023թ. ընթացքում KPMG աուդիտորական ընկերության կողմից իրականացվել է նաև Բանկի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխանության գնահատում, որի արդյունքներով ՓԼ/ԱՖ ոլորտում միջազգային ստանդարտներին անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

ԻՐԱՎԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԲԵՐՈՒՄ

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել բանկային ծառայությունների իրավական աջակցության գործառույթի իրականացմանը, դատական գործերի արդյունավետ և ժամանակին իրավական աջակցության ապահովմանը, խնդրահարույց վարկերի վերադարձի և գույքի վաճառքի իրականացմանը: Խնդրահարույց վարկերի գծով փաստացի հետքերումը 2023 թվականին կազմել է մոտ 6 մլրդ դրամ: Պահուստների կառավարման կոմիտեն գործել է բավականին ակտիվ, տարվա ընթացքում կայացել է ավելի քան 80 նիստ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻԾ

2023թ. հոկտեմբերին Moody’s Investors Service միջազգային վարկանշային գործակալությունը հաստատել է Յունիբանկի վարկանիշը B2 մակարդակում դրամով և արտարժույթով երկարաժամկետ ավանդների համար, կանխատեսումը՝ կայուն: Բազային վարկային գնահատականը /baseline credit assessment (BCA)/սահմանվել է b3, իսկ կոնտրադենտի ռիսկի գնահատականը /longterm Counterparty Risk Assessment (CR As-sessment)/՝ B2(cr)/NP(cr) մակարդակի վրա:

2024 ԹՎԱԿԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջնաժամկետ հեռանկարում իրականացման համար Բանկի հիմնական ռազմավարական նախաձեռնությունների շրջանակն ընդգրկում է հետևյալ ոլորտները և կարող է ընդլայնվել ու համալրվել փոփոխվող իրողություններով թելադրված նոր խնդիրներով.

- Բաժնետերերի կառուցվածքի ընդլայնում, սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման միջոցով կապիտալի ներգրավում,
- Մանրածախ վարկավորման շուկայում Բանկի մասնաբաժնի ավելացում, մասնավորապես հիփոթեքային վարկավորման ծավալների ավելացում,
- Ֆինանսական տեխնոլոգիաների զարգացում (արհեստական բանականության ամբողջական ներդրում անգրավ մանրածախ վարկերի համար, մարքեթփլեյսի հարթակի և էլեկտրոնային առևտրի գործարկում, հեռահար բանկային սպասարկման համակարգերի զարգացում):
- Որպես երկարաժամկետ համաշխարհային միտում ESG ստանդարտների ներդրում Բանկում «կանաչ» ֆինանսավորման նոր գործիքների մշակման շրջանակներում «կանաչ» պարտատոմսերի թողարկման գործընթացի մեկնարկ
- Թղթակցային ցանցի ընդլայնում. տրանզակցիոն եկամուտների աճի նոր գործիքակազմի մշակում
- Բրոքերային ծառայությունների գործիքակազմի ընդլայնում
- Մինչև 2024 թ-ի վերջ Բանկը պլանավորում է մոտ 12 մլրդ ՀՀ դրամի զուտ շահույթի ապահովում՝ կրկնապատկելով 2023թ. ֆինանսական արդյունքը:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Յունիբանկը հանրության համար ոչ միայն հուսալի ֆինանսական գործընկեր է, այլև սոցիալապես պատասխանատու կառույց: Մենք համոզված ենք, որ ցանկացած խոշոր բիզնեսի կայուն զարգացման գրավականը հասարակության հետ սերտ և համընդգրկուն համագործակցությունն ու փոխգործակցությունն է: Յունիբանկը՝ որպես երկրի հասարակական կյանքում մշտապես գործուն մասնակցություն ցուցաբերող ֆինանսական հաստատություն, ոչ միայն իր ավանդն է ներդրում տնտեսության, ենթակառուցվածքների զարգացման և նոր աշխատատեղերի ստեղծման գործում, այլև ցուցաբերում է սոցիալական պատասխանատվության համակարգված մոտեցում՝ վստահ լինելով, որ գործունեության այս մոտեցումն է երկարաժամկետ զարգացման և առաջխաղացման գրավականը: Հովանավորչական և բարեգործական ծրագրերի, կրթության, մշակույթի և սպորտի բնագավառում տարբեր նախագծերի իրականացման և շրջակա միջավայրի նկատմամբ հոգատարության դրսևորման միջոցով Բանկը ձգտում է նպաստել հանրության կյանքի որակի և կենսամակարդակի բարելավմանը:



«Փողով ժամանակ գնեք, ոչ թե հակառակը: Սկզբում հենց ժամանակն է վերջանալու»

ՆԱԿԱԼ ՌԱԿԻԿԱՆՏ



«Կարևոր է ոչ թե պարզապես անցկացնել ժամանակը, այլ ներդնել այն որևէ գործի մեջ»

ՍԹԻՎԵՆ Ռ. ԲՈՎԻ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԺԱՄԱՆՑ

2023 թվականին Յունիբանկը շարունակել է իր համագործակցությունը Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հետ՝ կրթական ծրագրերի կատարելագործման և գործարար մակարդակում դրանց կիրառման նպատակով: Յունիբանկի ֆինանսավորմամբ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում բացվել է թվային բանկինգի լաբորատորիա:

Նպատակ ունենալով աջակցել որակյալ կրթությանը՝ Յունիբանկը համագործակցում է նաև «Մատենա» բիզնես դպրոցի հետ՝ տրամադրելով հատուկ կրթաթոշակներ:

Յունիբանկն ավանդաբար հանդես է գալիս՝ որպես «ԻՆՆ, Որտե՞ղ, Ե՞րբ» հեռուստախաղի և «Դիլիջանյան խաղեր» միջազգային փառատոնի հովանավոր, հանդիսանում է «Համահայկական ինտելեկտուալ շարժման» մշտական գործընկերը: Ծարժման հիմնական նպատակն է խթանել ինտելեկտուալ ժամանցի զարգացումը:

Յունիբանկը շարունակում է նաև դպրոցներին աջակցության իր ծրագիրը, որի շրջանակում աջակցություն է տրամադրվել նաև «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրին և Արտաշես Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցին:

Յունիբանկի հովանավորությամբ 2023 թվականին Երևանում անցկացվեց նաև FINTECH360 միջազգային համաժողովը, որի ընթացքում տարբեր երկրներից ժամանած փորձագետները քննարկեցին թվային փոխակերպման վերջին միտումներն ու լավագույն փորձը:

ՄՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ

Յունիբանկն իր գործունեության ընթացքում ակտիվորեն աջակցում է մարզիկներին և սպորտային տարբեր միջոցառումների անցկացմանը: Բանկի հովանավորությամբ հիմնադրվել է Սոլսփորտ մարզական ակումբը, որը միավորում է տարբեր մարզաձևերը ներկայացնող պրոֆեսիոնալ մարզիկների: Սոլսփորտ ակումբի նպատակն է՝ նպաստել տարբեր մարզաձևերի առաջխաղացմանը, մարզվելու համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, մանկապատանեկան սպորտի զարգացմանը, ցուցաբերել հասցեական աջակցություն տաղանդավոր մարզիկներին, որոնք Հայաստանը ներկայացնում են միջազգային ասպարեզում, այդ թվում՝ Օլիմպիական խաղերում: Ակումբի կազմում ընդգրկված է նաև Սոլսփորտ ֆուտզալի թիմը: Յունիբանկն ու Սոլսփորտ ակումբը կաջակցեն նաև մանկապատանեկան սպորտի զարգացմանն ու հասարակությանը կհաղորդակցեն առողջ ապրելակերպին:

Բարձր գնահատելով մեր ըմբիշների ձեռքբերումները՝ Յունիբանկը դարձավ Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի գլխավոր հովանավոր:

Բանկի հովանավորությամբ Սիսիանի մանկապատանեկան մարզադպրոցում կայացավ նաև Ջյուդոյի հանրապետական մրցաշարը՝ Նվիրված զոհված ազատամարտիկների հիշատակին:



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐ

Յունիբանկի զարգացման ռազմավարության վեկտորն ուղղվել է դեպի ESG-օրակարգ, ինչը ենթադրում է շրջակա միջավայրի նկատմամբ հոգատարություն, աշխատակիցների և հաճախորդների հանդեպ պատասխանատու վերաբերմունք, թափանցիկ գործունեություն, սոցիալական, բնապահպանական նախաձեռնություններին մասնակցություն:

Դեկարբոնիզացիայի նպատակով Յունիբանկի տվյալների մշակման կենտրոնն անցել է արևային էներգիայով սնուցման, ավտոպարկն ամբողջությամբ փոխարինվել է էլեկտրական մեքենաներով: Թվային տեխնոլոգիաների և էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության շնորհիվ զգալիորեն կրճատվել է թղթի սպառումը:

- Մենք ակտիվորեն աջակցում ենք «կանաչ» ծրագրերին, որոնք ուղղված են էկոլոգիայի բարելավմանը: Խոշոր ծրագրերից մեկը, որին մասնակցեց նաև Յունիբանկը, հայկական դրամի 30-ամյակի առթիվ Լոռիում՝ նոր անտառի հիմնումն էր: Ծրագրի շրջանակում տնկվեց 160.000 ծառ:
- Յունիբանկը հանդես է գալիս՝ որպես Robust Armenia. «Կայուն զարգացում և ESG միջազգային օրակարգ, տեղական կարիքներ» թեմայով կոնֆերանսի գործընկեր:

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Թեժ հեռախոսակապի կենտրոն
+ 374 10 59 55 55
callcenter@unibank.am

Ներդրողների և միջազգային
կազմակերպությունների հետ
հարաբերությունների զարգացման վարչություն
+374 10 59 22 59
ir@unibank.am
margarita.hambardzumyan@unibank.am

Հասարակայնության հետ կապերի ծառայություն
+374 10 55 56 86
lusine.khachatryan@unibank.am

Բանկի գլխամասային գրասենյակ
0025, ՀՀ, Երևան, Չարենցի 12, N53, 1-5
+374 10 59 22 59, +374 10 59 55 55,



«Կյանքի իրական արժեքը ժամանակն է, ոչ թե փողը: Ժամանակը սահմանափակ ռեսուրս է»

ՄԵՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ

